

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-34>

ՍԻՐՈ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարող,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

SIRO AMIRKHANYAN

Chief Compulsory Enforcement Officer of the RA,
PhD Student at YSU Chair of Civil Law

СИРО АМИРХАНИЯН

Главный принудительный исполнитель РА,
Аспирант кафедры гражданского права ЕГУ

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՈՇ ՈՋ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ**

**CENTRAL BANK OF THE RA, INSTITUTIONS AND SOME NON-
COMMERCIAL ORGANIZATIONS AS LEGAL ENTITIES OF PUBLIC LAW**

**ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК РА, УЧРЕЖДЕНИЯ И НЕКОТОРЫЕ
НЕКОММЕРЧЕСКИЕ ОРГАНИЗАЦИИ КАК ЮРИДИЧЕСКИЕ ЛИЦА
ПУБЛИЧНОГО ПРАВА**

Ներածություն

Ռոմանոզերմանական իրավունքի համակարգի երկրները, որոնք ճանաչում են իրավունքի բաժանումը՝ մասնավորի և հանրայինի, սովորաբար տարբերակում են մասնավոր և հանրային իրավունքի իրավաբանական անձերը: ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված լինելով հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիան՝ այդպիսի կարգավիճակ է վերապահված միայն համայնքներին և միջհամայնքային միավորումներին: Բնական է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան չի կարող սահմանափակվել միայն վերոթվարկյալ անձանցով: ՀՀ օրենսդրության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե ամրագրումը պետք է հանգեցնի նաև նրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը: Սույն հոդվածով իրականացվող հետազոտության նպատակն է հիմնավորել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակ պետք

է հանդիսանան ՀՀ կենտրոնական բանկը, բյուջետային հիմնարկները և որոշ ոչ առևտրային կազմակերպություններ:

Հիմնական հետազոտություն

Կենտրոնական բանկի իրավական կարգավիճակը գրականության մեջ վիճելի հարցերից մեկն է: Որոշ հետազոտողներ այն բնորոշում են որպես ունիտար ձեռնարկություն¹, մյուսները որպես հիմնարկ², երրորդները որպես գործադիր իշխանության մարմին³, չորրորդները որպես պետական մարմին, որն ընդգրկված չէ գործադիր իշխանության համակարգի մեջ⁴, հինգերորդները որպես պետական կորպորացիա⁵:

Սակայն պետք է նշել, որ մեծ թիվ են կազմում այն հեղինակները, որոնք նշում են, որ վերը նշված կարգավիճակներից ոչ մեկը (առկա կարգավորումների շրջանակներում) չի արտահայտում Կենտրոնական բանկի կարգավիճակը: Նրանց կարծիքով՝ Կենտրոնական բանկը նախևառաջ հանդես է գալիս որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ⁶ (իսկ թե ինչպիսի կազմակերպատիրավական ձևով, դա կախված է արդեն հանրային իրավունքի իրավաբանական անձանց տարանջատելիս նրանց կազմակերպատիրավական ձևերի ամրագրումից):

Կենտրոնական բանկը հանրային իրավունքի իրավաբանական անձ դիտելը բնորոշ է եվրոպական երկրներին: Օրինակ՝ Գերմանիայի դաշնային բանկը (Deutsche Bundesbank) ԳԴՀ կենտրոնական բանկն է և հանդիսանում է հանրային իրավունքի իրավաբանական անձ, որի կարգավիճակը սահմանված է սահմանադրական մակարդակով: Համաձայն ԳԴՀ Սահմանադրության 88-րդ հոդվածի, Գերմանիայի դաշնային բանկը անկախ է դաշնային կառավարությունից⁷: Այն ունի հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ համաձայն Գերմանիայի դաշնային բանկի մասի օրենքի⁸:

Կենտրոնական բանկին համանման կարգավիճակ է տրված նաև Իտալիայում, Ֆրանսիայում⁹, Չեխիայում, Սլովենիայում, Մոլդովայում, Վրաստանում և այլն¹⁰:

¹ Տե՛ս *Ефимова Л.*, Особенности правового положения Центрального банка РФ, Правовое регулирование банковской деятельности. Изд-во ЮрИнфоР, Москва, 1997 г., էջ 20–74:

² Տե՛ս *Гейвандов А.*, Центральный банк РФ: юридический статус, организация, функция, полномочия. Изд-во Моск. независимого ин-та междунар. Права, Москва, 1997 г., էջ 17–26:

³ Տե՛ս *Павлодский Е.*, Центральный банк: особенности правового статуса // Право и экономика. Юрид. Дом «Юстицинформ» Москва, 2001 г., № 6, էջ 25–29:

⁴ Տե՛ս *Тосунян Г., Викулин А.*, К вопросу о статусе Банка России. Деньги и кредит. 1998 г., № 9, էջ 9–16:

⁵ Տե՛ս *Минин В.*, К вопросу о правовом статусе Центрального банка РФ // Деньги и кредит. Москва, 1999 г., № 11, էջ 33–37, *Игнатьева С.*, К вопросу о правовом статусе Банка России // Хозяйство и право. Москва, 2004 г., № 11, էջ 72–80:

⁶ Տե՛ս *Пастухов Н.*, Центральный банк Российской Федерации как юридическое лицо, Изд-во Юристъ, Москва, 2015 г., № 5 էջ 38–43, *Кравченко Д.*, Юридические лица публичного права как новый субъект правоотношений в области банковской деятельности // Банковское право. Изд-во Юристъ, Москва, 2012 г., N 2, էջ 35 – 43, *Сергеев В.*, О юридических лицах публичного права // Банковское право. Изд-во Юристъ, Москва, 2013 г., N 2, էջ 3–15:

⁷ Տե՛ս Գերմանիայի դաշնային հանրապետության սահմանադրությունն ռուսերեն լեզվով, էլեկտրոնային ռեսուրս <https://www.krugosvet.ru/enc/gosudarstvo-i-politika/germaniya-konstitutsiya> (վերջին մուտք 25.01.2025):

⁸ Տե՛ս «Գերմանիայի դաշնային բանկի մասին» օրենքի § 2 անգլերեն լեզվով, էլեկտրոնային ռեսուրս <https://www.bundesbank.de/resource/blob/618304/6d6986cbc43dff1cf78d56b2c29502b/mL/bundesbank-act-data.pdf> (վերջին մուտք 25.03.2025):

⁹ Տե՛ս *Олейник О.*, Основы банковского права. Изд-во Юристъ, Москва, 1997 г., էջ 131:

¹⁰ Տե՛ս Act No. 6/1993 Coll. of 17 December 1992, on the Czech National Bank, էլեկտրոնային ռեսուրս https://www.cnb.cz/export/sites/cnb/cs/legislative/galleries/postaveni_cnb/act_on_cnb.pdf, Act Bank of Slovenia, էլեկտրոնային ռեսուրս <https://bsi.si/en/about-us>, Law on The National Bank of Moldova էլեկտրոնային ռեսուրս <http://www.bnm.md/en/content/law-national-bank-moldova-no548-xiii-july-21-1995>, Organic law of Georgia on The National Bank of Georgia էլեկտրոնային ռեսուրս https://www.nbg.gov.ge/uploads/legalacts/fts/eng/organuli_kanoni.pdf (վերջին մուտք 25.03.2025):

Ռուսական գրականության մեջ Կենտրոնական բանկի կարգավիճակի պարզաբանման առումով նշվում է, որ Ռուսաստանի բանկը ունի իրավունքի այնպիսի սուբյեկտի բոլոր հատկանիշները, ինչպիսին է իրավաբանական անձը, ընդ որում՝ այն մասնակցում է ինչպես քաղաքացիական իրավահարաբերություններում (իրացնելով քաղաքացիական իրավասուբյեկտություն), այնպես էլ հանրային հարաբերություններում (իրացնելով հանրային իրավական իրավասուբյեկտություն): Ռուսաստանի բանկին իրավաբանական անձի կարգավիճակ տալը նրան չի տալիս այնպիսի որակներ, որն հատուկ է իրավաբանական անձի մասնավոր իրավական ընկալմանը: Ռուսաստանի բանկի կարգավիճակը և գործառույթները պահանջում են, որ նրան տրվի հանրային իրավունքի իրավաբանական անձի հատուկ կարգավիճակ, որը կարտահայտի այս սուբյեկտի բնորոշ առանձնահատկությունները հենց հանրային իրավահարաբերություններում¹¹:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք ՀՀ կենտրոնական բանկը պետական մարմին է, ապա, մեր կարծիքով, ՀՀ կենտրոնական բանկի իրավական կարգավիճակի բնորոշումը պետք է փնտրել ՀՀ Սահմանադրության շրջանակում: ՀՀ Սահմանադրության 200-րդ հոդվածը սահմանում է՝ Հայաստանի Հանրապետության ազգային բանկը Կենտրոնական բանկն է: Կենտրոնական բանկը Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս անկախ է:

Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրության 200-րդ հոդվածին նախորդող հոդվածներում ՀՀ Սահմանադրությունը, սահմանելով կենտրոնական ընտրական հանձնաժողովի, հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, հաշվեքննիչ պալատի կարգավիճակը, ուղղակիորեն նրանց բնորոշել է որպես անկախ պետական մարմիններ, սակայն Կենտրոնական բանկի պարագայում ձեռնպահ է մնացել նման շեշտադրումից: Հետևաբար մեր գնահատմամբ, ՀՀ Կենտրոնական բանկի կարգավիճակը չի կարելի հանգեցնել պետական մարմին լինելուն. այն իրենից ներկայացնում է պետության հիմնադրած առանձին հանրային իրավաբանական անձ:

ՀՀ կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է: Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից, այն գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկի ստեղծումը չի կարելի համարել մասնավոր-իրավական բնույթ ունեցող ակտ¹²: Նրա ստեղծման կապակցությամբ քաղաքացիական օրենսդրության դրույթները չեն կիրառվում, հետևաբար, այն չի կարելի նույնացնել մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ:

Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը: Իր հիմնական նպատակն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը, միևնույն ժամանակ Կենտրոնական բանկն իր իրավասության սահմաններում ընդունում է նորմատիվ, ներքին և անհատական բնույթի

¹¹ См. Терентьева Н., Правовая природа центрального банка Российской Федерации как юридического лица и субъекта права, № 8, 2016 г., էջ 53:

¹² Այն հիմնադրվել է ՀՀ Սահմանադրության հիման վրա «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով:

իրավական ակտեր¹³, այսինքն նա հանդես է գալիս պետաիշխանական լիազորություններով օժտված և հանրային գործառույթներ իրականացնող անձ:

Բացի վերոնշյալից՝ ՀՀ կենտրոնական բանկն իր խնդիրներն իրագործելու նպատակով կարող է իր անունից՝

- կնքել պայմանագրեր, ձեռք բերել իրավունքներ, ստանձնել պարտավորություններ, այդ թվում՝ վերցնել վարկեր.

- հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող.

- օրենքով նախատեսված դեպքերում ձեռք բերել, տիրապետել, օգտագործել և օտարել գույք, գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ:

Հետևաբար այն հանդես է գալիս որպես քաղաքացիական իրավահարաբերությունների լիիրավ անդամ:

Այսպիսով, ՀՀ կենտրոնական բանկը ոչ միայն դասական իմաստով հանրային իշխանության օժտված մարմին է, այլև իրավաբանական անձի կարգավիճակով օժտված և որոշակի ֆինանսավարկային գործունեություն իրականացնող կազմակերպություն: ՀՀ կենտրոնական բանկն իրականացնում է հանրային իրավական գործառույթներ և ունի վարչաիշխանական լիազորություններ (իրականացնում է պետության դրամավարային քաղաքականությունը), ունի հանրային իրավասություններ, ինչպես նաև մասնակցում է քաղաքացիական իրավական հարաբերություններում (ընդ որում՝ մասնակցում է իր անունից և անգամ կրում է ինքնուրույն գույքային պատասխանատվություն, այսինքն ունի նաև քաղաքացիական իրավասություններ) որպես իրավաբանական անձ (ընդ որում իրավաբանական անձ, որը չի բխում իրավաբանական անձի մասնավոր իրավական ընկալումից), որպիսի հանգամանքը մեզ թույլ է տալիս միանշանակ պնդել, որ այն հանդես է գալիս որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի կլասիկ դրսևորում:

Հանրային իրավունքի իրավաբանական անձանց ներպետական համակարգը կառուցելիս, անկասկած, որպես հանրային իրավունքի իրավաբանական անձանց հատուկ տեսակ պետք է առանձնացնել հանրային հիմնարկները:

Ս. Ն. Բրատսուրը որպես հիմնարկների բնութագրիչ հատկանիշներ առանձնացնում էր հետևյալը՝ 1) հիմնարկը հիմնադրվում է մեկ կամ մի քանի հիմնադիրների կամքով և գործում է անձանց անորոշ շրջանակի (շահառուների) շահերից ելնելով, 2) հիմնարկի գործունեության հիմքը ոչ միայն հիմնադրի կամ հիմնարկի ղեկավար անձնակազմի կամքն է, այլ նաև պետական կամքը, 3) հիմնարկի հիմք է կազմում գույքը, որ փոխանցվում է հիմնադիրների կողմից և ծառայում է հիմնարկի հիմնադրման նպատակներին, 4) հիմնարկների և նրա շահառուների միջև կորպորատիվ հարաբերություններ չեն ծագում, 5) հիմնարկը չի կարող լուծարվել հիմնարկի ղեկավար անձնակազմի կողմից, այլ միայն օրենքի ուժով¹⁴:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածը սահմանում է՝ որ հիմնարկ է համարվում կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձի ստեղծած կազմակերպությունը: Հիմնարկն իրավաբանական անձ չէ և գործում է իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել հիմնարկների մի քանի տեսակներ՝ ընկերության հիմնարկներ¹⁵, բյուջետային հիմնարկներ, որոնք են բյուջեից ֆի-

¹³ Տե՛ս «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը հոդվածներ 2, 4, 5:

¹⁴ Տե՛ս *Братусь С.*, Юридические лица в советском гражданском праве. Москва, 1947 г., էջ 46–47, 57, 61, 66:

¹⁵ Տե՛ս, օրինակ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը (25.09.2001) հոդված 6, «Սահմանափակ

նանսավորվող պետական և համայնքային հիմնարկները¹⁶ և համայնքային կառավարչական հիմնարկները¹⁷: Ակնհայտ է, որ հիմնարկները կարելի է բաժանել 2 մասի՝ մասնավոր հիմնարկների և հանրային հիմնարկների, պայմանավորված նրանով, որ վերջիններս իրականացնում են հանրային գործառույթներ (սույն աշխատանքի նպատակներից ելնելով առավել մանրամասն կքննարկենք միայն հանրային հիմնարկների իրավական կարգավիճակը):

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում հիմնարկների ամենատարածված տեսակներից համարվում էին **պետական կառավարչական հիմնարկները**: Դրանք ստեղծվում էին Հանրապետության Նախագահի, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների, դատախազության, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև օրենքով ստեղծված՝ պետական կառավարչական գործառույթներ իրականացնող այլ մարմինների կողմից՝ վերջիններիս լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունն ապահովելու նպատակով:

Սակայն 2018 թվականի մարտի 23-ին ընդունված **«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի** 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո **«Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-247 օրենքը չի տարածվում** այն պետական մարմինների վրա, որոնք կառավարվում են օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ կառավարման լիազորություններ իրականացնող սահմանադրական մարմնի (կամ պաշտոնատար անձի) կողմից:

Արդյունքում, պետք է արձանագրել, որ ներկայումս գործում են միայն **համայնքային կառավարչական հիմնարկներ**, և պետական կառավարչական հիմնարկների վերաբերյալ օրենքը կարգավորում է բացառապես դրանց՝ այսինքն՝ համայնքային կառավարչական հիմնարկների՝ իրավական կարգավիճակը, ստեղծման, գործունեության և վերակազմակերպման ընթացակարգերը:

Համայնքային կառավարչական հիմնարկներից են ՀՀ համայնքների աշխատակազմերը¹⁸: Այս առումով տարօրինակ է օրենսդրի մոտեցումն առ այն, թե ինչու մեկ կոլեկտիվ սուբյեկտի (պետության) դեպքում ղեկավարվելով (մեր կարծիքով) «համակարգը որպես այդպիսին չի կարող մասնակցել քաղաքացիական հարաբերություններին առանձին միավորների հետ միասին» սկզբունքով մի դեպքում վերացրել է պետական կառավարչական հիմնարկները որպես քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու միջոց՝ սահմանելով, որ պետական մարմին իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում գլխավոր քարտուղարի միջոցով¹⁹ իսկ մյուս դեպքում՝ ոչ: Եթե նպատակը քաղաքացիական շրջանառությանը մասնակցելն է, ապա ամեն դեպքում ինչու է դրա համար ստեղծվում առանձին կազմակերպական կազմավորում այն էլ այն դեպքում, երբ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղե-

պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը հոդված 7:

¹⁶ Տե՛ս «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը (24.06.1997) հոդված 5:

¹⁷ Տե՛ս «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքը (23.10.2001) հոդված 1:

¹⁸ Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի ավագանու 15 հունիսի 2013 թ N 11-Ն որոշումը Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին, էլեկտրոնային ռեսուրս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122097> (վերջին մուտք 25.03.2025):

¹⁹ Տե՛ս «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», ՀՀ օրենքը հոդված 12 մաս 1:

կավարը, իսկ քննարկվող օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, *աշխատակազմն ապահովում է համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում նրանց մասնակցությունը*: Արդյունքում ստացվում է այնպես, որ քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցում են համայնքի ղեկավարն ու ավագանին որպես համայնքի մարմիններ և մասնակցում են աշխատակազմի միջոցով: Այսինքն՝ **մարմինը**, այլ ոչ թե **համայնքը** մասնակցում է քաղաքացիական շրջանառությանը մեկ այլ կազմավորման միջոցով: Այս առումով կասկածելի է համայնքային կառավարչական հիմնարկների գոյության նպատակահարմարությունը և մեր կարծիքով պետական մարմինների նմանությամբ համայնքի դեպքում ևս պետք է վերացնել կառավարչական հիմնարկները և սահմանել, որ համայնքը քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցում է գլխավոր քարտուղարի միջոցով:

Կառավարչական հիմնարկներից բացի՝ ՀՀ-ում գործունեություն են ծավալում նաև մի շարք պետական և համայնքային հիմնարկներ (բյուջետային հիմնարկներ)²⁰:

ՀՀ օրենսդրությունը հիմնարկներին չի դասում իրավաբանական անձանց շրջանակին՝ սահմանելով, որ հիմնարկները իրավաբանական անձ չեն: Այս խնդրահարույց իրավիճակին անդրադարձել է նաև պրոֆեսոր Տ. Բարսեղյանը նշելով, որ «քաղաքացիական օրենսգիրքը հիմնարկներին վերապահել է ամորֆ կարգավիճակ: Քաղ. օր. 62 հոդվածի համաձայն՝ հիմնարկը իրավաբանական անձ չէ և գործում է իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա: Այսինքն՝ հիմնարկները իրենց կարգավիճակով և պատասխանատվությամբ հավասարեցվել են մասնաճյուղերին և ներկայացուցչություններին, բայց պահպանել են իրենց առանձնահատուկ գործառույթները: Արդյունքում՝ գույքային շրջանառությունը բախվեց անհասկանալի իրավիճակի հետ: Անհնար դարձավ ընկալել 1460 դպրոցների, մոտ երկու հազար գիտահետազոտական ինստիտուտների, գիտական կազմակերպությունների, առողջապահական և միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատությունների կարգավիճակը: Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ տարբեր օրենքներով կատարվեցին կանոնակարգման փորձեր, որը ի վերջո հանգեցրեց հիմնարկների շերտավորման՝ պետական որոշ հիմնարկների՝ ՊՈԱԿ-ների, վերապահվեց իրավաբանական անձի կարգավիճակ, իսկ մյուսները մնացին կախյալ ու անհասկանալի կարգավիճակով»²¹:

Հարկ է նշել, որ հիմնարկ հասկացությունը ներպետական և արտասահմանյան երկրների օրենսդրությունների մեջ կիրառվում է տարբեր իմաստներով: Արտասահմանյան երկրներում (Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Մոլդովայում, Վրաստանում²²) հիմնարկները համարվում են իրավաբանական անձեր: Ընդհանուր առմամբ հիմնարկի կազմակերպաիրավական ձևերով հիմնադրվում են բարձրագույն ուսումնական հաստատություններ, դպրոցներ, քոլեջներ, գիտահետազոտական կենտրոններ, հիվանդանոցներ և այլն:

²⁰ Տե՛ս, օրինակ, «Առողջապահական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ» պետական հիմնարկի մասին էլեկտրոնային ռեսուրս <https://healthpiu.am>, ՀՀ կառավարության 13 հունվարի 2011 թվականի N 9-Ն որոշումը ՀՀ Բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին:

²¹ Տե՛ս Բարսեղյան Տ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործող օրենսգրքի ներկա վիճակը և կատարելագործման հեռանկարները, Երևան, 2013, էջ 62:

²² Տե՛ս Ս. Ամիրխանյան, «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց» հիմնական տեսակներն արտասահմանյան երկրներում, Դատական իշխանություն, գիտամեթոդական ամսագիր, 2017, 9 - 10 (219-220), էջ 13-20, ինչպես նաև «Гражданский кодекс Российской Федерации» հոդված 123.21, էլեկտրոնային ռեսուրս <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?rnd=5943A45A9673682ECA285A57686B34B2&base=LAW&n=300822&dst=4294967295&cacheid=35143974863E68B0CF2F83ABE17FC387&mode=rubr&req=doc#1aqyo3997is> (վերջին մուտք՝ 25.03.2025):

Ակնհայտ է, որ դասական իմաստով հիմնարկներ պետք է համարվեն ներկայում ՀՀ-ում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունները, քանի որ նրանց ներկայում տրված է արհեստածին կարգավիճակ և ողջունելի է այն մոտեցումը, որ հիմնարկն իրավաբանական անձ ճանաչելու համապատասխան առաջարկ է արվել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգում²³:

Նշենք, որ հանրային հիմնարկները դրանք այլ կազմակերպատիրավական ձև են, քան պետական կամ մունիցիպալ մարմինները և գործում են այլ մեթոդներով: Ի տարբերություն պետական համայնքային մարմինների՝ հանրային հիմնարկները իրավունք չունեն հրապարակել ընդհանուր կիրառելիության ենթակա նորմատիվ իրավական ակտեր: Նրանք հանդիսանում են լոկ ալոկալիս իրավական ակտեր կիրառողներ²⁴: Հանրային հիմնարկները չունեն հարկադրանքի այն միջոցները, որոնք կարող են գործածել հանրային իշխանության մարմինները: Հանրային (պետական և մունիցիպալ) հիմնարկների, որպես ոչ առևտրային կազմակերպությունների, գործունեության հիմնական ուղղությունը իրենց կողմից աշխատանքների կատարումն է կամ պետական (համայնքային) ծառայությունների մատուցումն է տարբեր սոցիալական ոլորտներում՝ նպատակ ունենալով ապահովել պետական կամ մունիցիպալ մարմինների գործառույթների իրականացումը²⁵:

Բացի վերոգրյալից՝ պետք է արձանագրել, որ ՀՀ օրենսդրությունը այսպես, թե այնպես իրավական առումով կարելի է ասել նրանց հավասարեցնում է իրավաբանական անձանց՝ ընդունելով, որ նրանք կարող են ունենալ իրենց սեփական կարիքները (իրավասուբյեկտություն) և դրանով պայմանավորված նրանք գործարքներ են կնքում իրենց անունից և ի շահ իրենց²⁶:

Հանրային իրավունքի իրավաբանական անձանց համակարգի մեջ պետք է ընդգրկվեն նաև որոշ ոչ առևտրային կազմակերպությունները, սակայն նրանց հանրային իրավունքների իրավաբանական անձանց հատուկ խմբում առանձնացնելիս անհրաժեշտ է ցուցաբերել տարբերակված մոտեցում:

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում «ոչ առևտրային կազմակերպություն» եզրույթը միավորում է պետական և ոչ պետական կազմավորումները, որոնք ի սկզբանե ունեն գործառութավորման և կառավարման տարբեր սկզբունքներ: Մասնավոր իրավունքի ոչ առևտրային կազմակերպությունները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, էականորեն տարբերվում են հանրային իրավունքի իրավաբանական անձանցից թե՛ ստեղծման, գործունեության և լուծարման կարգով, թե՛ իրավակարգավորման սկզբունքներով և թե մի շարք այլ առանձնահատկություններով:

Ոչ պետական ոչ առևտրային կազմակերպությունների առանձնացման չափանիշ կարող է համարվել ներկայումս տարածում ստացած այն տեսակետը, որ ոչ առևտրային կազմակերպությունները հանդիսանում են քաղաքացիական հասարակության ինստիտուտներ²⁷, և նրանց

²³ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգ, գլուխ 5՝ իրավաբանական անձինք. Հեղ. Ավետիսյան Վ., Սերոբյան Դ., Երևան, 2014 թ., էջ 8, էլեկտրոնային ռեսուրս http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656566421131_Iravabanakan_andinq.pdf (վերջին մուտք՝ 25.03.2025):

²⁴ Տե՛ս *Чиркин В.*, Юридическое лицо публичного права. Монография, Изд-во Норма, Москва, 2007 г., էջ 247, 251:

²⁵ Տե՛ս *Попова Д.*, Публичное учреждение в сфере реформы гражданского законодательства//Сибирский юридический вестник, №3 (58), Изд-во Иркут. гос. ун-та, Иркутск, 2012 г., էջ 59:

²⁶ Տե՛ս, օրինակ, ՀՀ Լոռու մարզի Տաշիրի քաղաքային տնտեսությանը սպասարկող հիմնարկի կողմից իր կարիքների համար դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊԶԲ-19/13» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը, էլեկտրոնային ռեսուրս <https://gnumner.minfin.am/hy/search/> վերջին մուտք (22.03.2025):

²⁷ Տե՛ս, Հավելված N 1 ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի նիստի N 40 արձանագրային որոշման «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումները» հայեցակարգ, էջ 2, էլեկտրոնային ռեսուրս. https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_

կազմավորումը իրականացվում է *կամավորության, անկախության, դիսպոզիտիվության և այլ սկզբունքների հիման վրա*²⁸: Բնական է, որ ՀՀ գործող քաղաքացիական օրենսդրության համաձայն ոչ առևտրային համարվող կազմակերպությունների մի մասը չի կարող դասվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շարքին, քանի որ այս սկզբունքները դրանց մի մասին վերաբերելի չեն: Հետևաբար անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում քաղաքացիական հասարակության հաստատություններ չհամարվող կազմակերպություններին ներառել հանրային իրավունքի իրավաբանական անձանց շրջանակում:

Առաջին հերթին ասվածը վերաբերում է այն կազմակերպություններին, որոնք ստեղծվում են պետության կողմից կամ առանձին իրավական ակտերի հիման վրա և չունեն վերոնշյալ հատկանիշները: Որպես օրինակ կարելի է նշել պետական ոչ առևտրային կազմակերպությունները: Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով: Համաձայն քննարկվող օրենքի 9-րդ հոդվածի՝ պետական կազմակերպության հիմնադիր կարող է հանդիսանալ միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության: Պետական կազմակերպությունն ստեղծվում է կառավարության որոշմամբ: Ակնհայտ է, որ պետական ոչ առևտրային կազմակերպություններ, հիմնադրվում են հատուկ կարգով, իրականացնում են հատուկ հանրային գործունեություն, ինչպես նաև կապված են հանրային իշխանության հետ (պետությունը որոշակի գործառույթներ է վերապահել նրանց):

Միևնույն ժամանակ **քաղաքացիական հասարակության բաղկացուցիչ մաս** չեն կարող դիտարկվել որոշ այլ ձևի **ոչ առևտրային կազմակերպություններ**, եթե վերջիններս ստեղծվել են պետության, համայնքի կամ դրանց մարմինների կողմից: Այդպիսի կազմակերպությունների օրինակներ են՝

- **հիմնադրամները** (օրինակ՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրամը),
- **ֆոնդերը** (օրինակ՝ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը),
- **համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները**, որոնց շարքում կարելի է

նշել մի շարք կրթական հաստատություններ:

Ոչ առևտրային կազմակերպությունների տարատեսակներից որպես **հանրային իրավունքի իրավաբանական անձեր** կարելի է դիտարկել նաև **ինքնակառավարվող կազմակերպությունները**, որոնք հաճախ բնութագրվում են որպես **հանրային կորպորացիաներ**: Թեև ՀՀ օրենսդրությունը «հանրային կորպորացիա» հասկացությունը որպես իրավաբանական անձի տեսակ **չի ճանաչում**, այնուամենայնիվ, միջազգային փորձում այդ եզրույթը կիրառվում է նմանատիպ կազմակերպությունների բնութագրման համար: Ուստի անհրաժեշտության դեպքում կիրառելի է նաև մեր համատեքստում:

Հանրային կորպորացիաները հանդիսանում են կազմակերպություններ, որոնք.

- հիմնադրվում են առնվազն երկու հիմնադիրների կողմից,

voroshum/2104/09/40-42.pdf, Helene Eller, Corporate governance in alpine clubs in Europe: Doctoral Thesis, Riga 2015, էջ 54, էլեկտրոնային ռեսուրս https://dspace.lu.lv/dspace/bitstream/handle/7/28200/298-46021-Helene_Eller_2015.pdf?sequence=1 (վերջին մուտք 25.03.2025):

²⁸ Տե՛ս *Պողոսյան Գ.*, Ոչ առևտրային կազմակերպությունները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2018, էջ 32:

- ունեն անդամներ (պետության մասնակցությունն այստեղ չի բացառվում),
- և կարող են իրականացնել **հանրային իրավական գործառույթներ**:
Նման կորպորացիաների ստեղծման հիմնական նպատակն է՝
- պետության իշխանական լիազորությունների **սահմանափակումը**,
- հանրային-իշխանական որոշ գործառույթների փոխանցումը **ոչ պետական** սուբյեկտներին:

Մեր կարծիքով, այս տիպի ինքնակառավարվող հանրային կորպորացիաներ կարելի է համարել **Նոտարական պալատը, Փաստաբանական պալատը**, ինչպես նաև **նմանատիպ սկզբունքով կազմավորված այլ միավորումներ**:

Նշված կազմակերպություններին միավորում է այն հանգամանքը, որ.

- դրանք հիմնադրվում են մասնավոր իրավունքի սուբյեկտների՝ որոշակի մասնագիտություն ունեցող քաղաքացիների կողմից,

- և միավորում են մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց:

Միևնույն ժամանակ, օրենսդիրը նախատեսում է այդ կազմակերպություններին **անդամակցելու պարտականություն**՝ որպես տվյալ մասնագիտությամբ գործունեություն իրականացնելու **նախապայման**: Դրանով այդ կազմակերպություններին տրվում է.

- տվյալ մասնագիտական գործունեության իրականացման **կանոններ սահմանելու**,

- և այդ կանոնների պահպանումը վերահսկելու **լիազորություն**:

Բացի դրանից՝ նրանց վերապահվում է նաև **սանկցիա կիրառելու իրավասություն**, օրինակ՝ տվյալ կազմակերպության անդամին՝ կանոնների խախտման դեպքում **անդամությունից հեռացնելու** միջոցով:

Եվրոպական դատարանը դեռևս 2001 թ. ապրիլի 3-ի *Օ. Ռոմանովսկայան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության* գործով, նշել է, որ «նոտարական պալատները հիմք ընդունելով 1993թ փետրվարի 11-ի նոտարիատի մասին ՌԴ օրենսդրության հիմունքները և նոտարական պալատի գործառույթներին վերաբերող օրենսդրությունը չեն կարող դիտվել որպես միություններ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի» (1950թ.) 11-րդ հոդվածի համատեքստում: Ինչպես նշել է Եվրոպական դատարանը, Կոնվենցիոն Մարմինները հետևողականորեն չեն ճանաչել գործադիր և կարգավորիչ մասնագիտացված մարմիններն, որոնք ստեղծվում են այսպես ասած ազատ մասնագիտությունների տեր անձանց կողմից, որպես ասոցիացիաներ (միություններ) 11-րդ հոդվածի համատեքստում: Օրենսդրորեն ամրագրված այդ մարմինների նպատակը հսկողության և մասնագիտական գործունեության զարգացումն է, ընդ որում՝ նրանք կատարում են կարևոր հանրային իրավական գործառույթներ, որը նպատակ է հետապնդում պաշտպանել այլ անձանց շահերը, և չի կարելի նրանց ճանաչել մասնավոր միությունների հետ. դրանք այնուամենայնիվ ինտեգրված են պետական ապարատ»²⁹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համատեքստում մի շարք գործերով ևս ընդգծվել է, որ ինքնակարգավորվող կազմակերպություններին անդամակցության պահանջը՝ անձանց միավորումը մասնագիտական հատկանիշների հիման վրա, չի հանդիսանում անձի՝ միավորումներին կամավոր անդամակցելու իրավունքի խախտում³⁰:

²⁹ Տե՛ս, Решение ЕСПЧ от 03.04.2001 «По вопросу приемлемости жалобы N 44319/98 «Ольга Валентиновна Романовская против Российской Федерации» էլեկտրոնային ռեսուրս <https://www.garant.ru/products/ipo/prime/doc/6034693/?ysclid=m8wrc14abw953390787> (վերջին մուտք՝ 25.03.2025):

³⁰ Տե՛ս, օրինակ, Barthold v. Federal Republic of Germany, 8734/79, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

Համապատասխանաբար, ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ.) 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման: Հետևաբար՝ ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում միավորվելու ազատության իրավունքը տարածվում է միայն մասնավոր միավորումների վրա, որից բխում է, որ միայն այդպիսի միավորումներին անդամագրվելը չի կարող իրականացվել հարկադրաբար՝ դրանով իսկ թույլատրելով հանրային մասնագիտական միություններին անդամակցելու պարտադիրությունը, որի գործառույթավորման հիմք կարող է հանդիսանալ հանրային իրավունքի իրավաբանական անձի կառուցակարգը:

Հանրային կորպորացիաները հանրային իրավունքի իրավաբանական անձ դիտելը պայմանավորված է նաև նրանով, որ բացի անդամակցության պարտադիրությունից՝ նրանք իրականացնում են նաև պետության կողմից փոխանցված հանրային գործառույթներ: ՀՀ Սահմանադրական դատարանը դեռևս 10 մայիսի 2016 թ. ՍԴՈ-1271 որոշման մեջ նշել է, որ «Օրենսդիրը հանրային իշխանությանը բնորոշ որոշ գործառույթների իրականացումը պատվիրակել է նոտարին: Ընդ որում, նոտարին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տալիս է Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով կնիք, որի վրա նշված են «Հայաստանի Հանրապետություն» բառերը, և որով վավերացվում են համապատասխան փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալն ընդգծում է տվյալ գործառույթի կարևորությունը հանրային կյանքի կազմակերպման տեսանկյունից»:

Այսպիսով, պետությունը կարող է որոշակի դեպքերում պատվիրակել հանրային իրավական լիազորություններ բոլոր հնարավոր ոչ պետական միավորումներին³¹, որը հիմնվում է պարտադիր մասնակցության սկզբունքի վրա՝ որպես այս կամ այն մասնագիտական գործունեություն իրականացնելու պայմաններից մեկ: Ընդ որում՝ պետությունը որոշում է բավականին տարբեր խնդիրներ: Այսպես օրինակ, այնպիսի մասնագիտական պալատի միջոցով, ինչպիսին է փաստաբանական պալատը պետությունը հետևողականորեն սահմանում է փաստաբանական պալատի առանձնացվածությունը պետությունից սկզբունքը և անվճար իրավաբանական օգնությունը:

Հետևաբար, ՀՀ նոտարական պալատը և ՀՀ փաստաբանների պալատը, նրանց համանունությամբ մի շարք այլ միություններ պետք է համարել հանրային **իրավունքի իրավաբանական անձեր, որպես հանրային կորպորացիաներ:**

Եզրակացություն

Այսպիսով՝ ՀՀ օրենսդրության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե ամրագրումը պետք է հանգեցնի նաև նրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը, որի տարատեսակ, ըստ մեզ, պետք է հանդիսանա՝

1) **ՀՀ կենտրոնական բանկը**, քանի որ այն հիմնադրվում է հատուկ կարգով, իրականացնում է հանրային իրավական գործառույթներ (իրականացնում է պետության դրամավարային

25.03.1985 թվականի վճիռը, էլեկտրոնային ռեսուրս, [https://hudoc.echr.coe.int/eng#{«appno»:\[«14331/88»\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{«appno»:[«14331/88»]}) վերջին մուտք (վեջին մուտք՝ 25.03. 2025):

³¹ Համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՌԴ Սահմանադրական դատարանը 1998 թվականի մայիսի 19-ի N 15-Ո որոշման մեջ, էլեկտրոնային ռեսուրս http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_18805/ (վեջին մուտք՝ 25.03. 2025):

քաղաքականությունը) և ունի վարչաիշխանական լիազորություններ, ունի հանրային իրավասուբյեկտություն, ինչպես նաև մասնակցում է քաղաքացիաիրավական հարաբերություններում (ընդ որում մասնակցում է իր անունից և անգամ կրում է ինքնուրույն գույքային պատասխանատվություն, այսինքն ունի նաև քաղաքացիական իրավասուբյեկտություն) որպես իրավաբանական անձ:

2) **Բյուջետային հիմնարկները.** Պետական և համայնքային հիմնարկների, որպես ոչ առևտրային կազմակերպությունների, գործունեության հիմնական ուղղությունը իրենց կողմից աշխատանքների կատարումը կամ պետական (համայնքային) ծառայությունների մատուցումն է տարբեր սոցիալական ոլորտներում՝ նպատակ ունենալով ապահովել պետական կամ մունիցիպալ մարմինների գործառույթների իրականացումը, որի արդյունավետ իրացման գրավականը նրանց իրավաբանական անձի կարգավիճակ տրամադրելն է: Ընդ որում՝ կատարված ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ՀՀ օրենսդրությունը պետության կամ համայնքի կողմից հիմնադրած հիմնարկները չհամարելով իրավաբանական անձ, կամաթե ականա, իրավական առումով նրանց հավասարեցնում է իրավաբանական անձանց՝ ընդունելով, որ նրանք կարող են ունենալ իրենց սեփական կարիքները (իրավասուբյեկտություն) և դրանով պայմանավորված նրանք գործարքներ են կնքում իրենց անունից և ի շահ իրենց:

3) **Հանրային-իրավական կազմավորումների կողմից ստեղծվող և վերահսկվող ոչ առևտրային կազմակերպությունները (պետական ոչ առևտրային կազմակերպություններ, պետության կամ կենտրոնական բանկի կողմից հիմնադրված հիմնադրամներ և այլն), ինչպես նաև պարտադիր անդամակցության սկզբունքի հիման վրա գործող ինքնակարգավորվող կազմակերպությունները (մասնագիտական միություններ),** քանի որ կատարված ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ պետության կամ համայնքի կողմից առանձին իրավական ակտերի հիման վրա ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունները, ինչպես նաև մասնագիտական միությունները, որոնք չեն հիմնադրվում կամավորության, անկախության և դիսպոզիտիվության սկզբունքների հիման վրա չեն կարող նույնացվել մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ և պետք է դասվեն հանրային իրավունքի իրավաբանական անձանց շարքում:

Ամփոփագիր: ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված լինելով հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիան՝ այդպիսի կարգավիճակ է վերապահված միայն համայնքներին և միջհամայնքային միավորումներին:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ ՀՀ օրենսդրության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե ամրագրումը պետք է հանգեցնի նաև նրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը: Հիմք ընդունելով ՀՀ-ում և արտասահմանում գործող իրավակարգավորումները և մի շարք իրավաբան-գիտնականների աշխատությունները, հիմնավորվել է, որ ՀՀ կենտրոնական բանկը պետք է հանդիսանա հանրային իրավունքի իրավաբանական անձ, քանի որ նրա ստեղծման կապակցությամբ քաղաքացիական օրենսդրության դրույթները չեն կիրառվում, այն ունի վարչաիշխանական լիազորություններ, ունի հանրային իրավասուբյեկտություն, ինչպես նաև մասնակցում է քաղաքացիաիրավական հարաբերություններում որպես իրավաբանական անձ: Բացի դրանից՝ հիմնավորվել է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձ պետք է հանդիսանան բյուջետային հիմնարկները, որոնց միջոցով պետությունը և համայնքը մատուցում է հանրային ծառայություններ, ինչպես նաև հանրային-իրավական կազմավորումների կողմից ստեղծվող և վերահսկվող ոչ առևտրային կազմակերպությունները (պետական ոչ առևտրային կազմակերպություններ, պետության կամ կենտրոնական բանկի կողմից հիմնադրված հիմնադրամներ և այլն), ինչպես նաև պարտադիր անդամակցության սկզբունքի հիման վրա գործող ինքնակարգավորվող կազմակերպությունները (մասնագիտական միություններ), քանի որ կատարված ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ պետության կամ համայնքի կողմից առանձին

իրավական ակտերի հիման վրա ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունները, ինչպես նաև մասնագիտական միությունները, որոնք չեն հիմնադրվում կամավորության, անկախության և դիսպոզիտիվության սկզբունքների հիման վրա չեն կարող նույնացվել մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ:

Annotation. Despite the fact that the legislation of the Republic of Armenia enshrines the category of legal entities of public law, only communities and inter-community associations have such a status. The relevance of the topic is due to the fact that the legal consolidation of the category of legal entities of public law in the legislation of the Republic of Armenia should also lead to a more complete definition of their types. Based on the legal regulations in force in the Republic of Armenia and abroad and the works of a number of legal scholars, it has been substantiated that the Central Bank of the Republic of Armenia should be a legal entity of public law, since the provisions of civil legislation do not apply to its establishment, it has administrative powers, has public legal personality, and also participates in civil law relations as a legal entity. In addition, it has been substantiated that legal entities of public law should be budgetary institutions through which the state and the community provide public services, as well as non-profit organizations established and controlled by public-law formations (state non-profit organizations, foundations established by the state or the central bank, etc.), as well as self-regulatory organizations operating on the basis of the principle of mandatory membership (professional unions), since the study conducted indicates that non-profit organizations established by the state or community on the basis of separate legal acts, as well as professional unions that are not established on the basis of voluntariness, independence and cannot be identified with private law legal entities based on the principles of dispositivity.

Аннотация. Несмотря на то, что в законодательстве Республики Армения закреплена категория юридических лиц публичного права, такой статус имеют только общины и межобщинные объединения. Актуальность темы данного исследования обусловлена тем, что юридическое закрепление в законодательстве Республики Армения категории юридических лиц публичного права должно привести также к более полному определению их видов. На основании действующих в Республике Армения и за рубежом правовых норм и трудов ряда ученых-юристов обосновано, что Центральный банк Республики Армения должен быть юридическим лицом публичного права, поскольку на его создание не распространяются положения гражданского законодательства: он обладает административными полномочиями, имеет публичную правосубъектность, а также участвует в гражданско-правовых отношениях как юридическое лицо. Кроме того, обосновано, что юридическими лицами публичного права должны быть бюджетные учреждения, через которые государство и общество оказывают публичные услуги, а также некоммерческие организации, созданные и контролируемые публично-правовыми образованиями (государственные некоммерческие организации, фонды, созданные государством или центральным банком и т.п.), а также саморегулируемые организации, действующие на основе принципа обязательности членства (профессиональные союзы), поскольку проведенное исследование свидетельствует о том, что некоммерческие организации, созданные государством или обществом на основе отдельных правовых актов, а также профессиональные союзы, которые не созданы на основе добровольности, независимости и не могут быть отождествлены с юридическими лицами частного права, основанными на принципах диспозитивности.

Բանալի բառեր - իրավաբանական անձ, հանրային իրավունքի իրավաբանական անձ, կենտրոնական բանկ, հիմնարկ, ոչ առևտրային իրավաբանական անձ, տեսակ, իրավաբանական անձանց տեսակ:

Key words: legal person, legal entity of public law, central bank, institution, non-profit legal entity, type, type of legal entities.

Ключевые слова: юридическое лицо, юридическое лицо публичного права, центральный банк, учреждения, некоммерческое юридическое лицо, тип, тип юридических лиц.

Օգտագործված գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործող օրենսգրքի ներկա վիճակը և կատարելագործման հեռանկարները, Երևան, 2013, էջ 62:
2. Ս. Ամիրխանյան, «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց» հիմնական տեսակներն արտա-

սահմանյան երկրներում, Դատական իշխանություն, գիտամեթոդական ամսագիր, 2017, 9 - 10 (219-220) էջ 13-20:

3. Պողոսյան Գ., Ոչ առևտրային կազմակերպությունները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2018, էջ 32:

4. Братусь С., Юридические лица в советском гражданском праве. Москва, 1947 г., էջ 46–47, 57, 61, 66.

5. Гейвандов А., Центральный банк РФ: юридический статус, организация, функция, полномочия. Изд-во Моск. независимого ин-та междунар. Права, Москва, 1997 г., էջ 17–26:

6. Ефимова Л., Особенности правового положения Центрального банка РФ, Правовое регулирование банковской деятельности. Изд-во ЮрИнфоР, Москва, 1997 г., էջ 20–74:

7. Игнатьева С., К вопросу о правовом статусе Банка России // Хозяйство и право. Москва, 2004 г., № 11, էջ 72-80:

8. Кравченко Д., Юридические лица публичного права как новый субъект правоотношений в области банковской деятельности // Банковское право. Изд-во Юристъ, Москва, 2012 г., N 2, էջ 35 – 43:

9. Минин В., К вопросу о правовом статусе Центрального банка РФ // Деньги и кредит. Москва, 1999 г., № 11, էջ 33-37:

10. Олейник О., Основы банковского права. Изд-во Юристъ, Москва, 1997 г., էջ 131:

11. Павлодский Е., Центральный банк: особенности правового статуса // Право и экономика. Юрид. Дом «Юстицинформ» Москва, 2001 г., № 6, էջ 25-29:

12. Пастухов Н., Центральный банк Российской Федерации как юридическое лицо, Изд-во Юристъ, Москва, 2015 г., № 5, էջ 38-43:

13. Попова Д., Публичное учреждение в сфере реформы гражданского законодательства // Сибирский юридический вестник, №3 (58), Изд-во Иркут. гос. ун-та, Иркутск, 2012 г., էջ 59:

14. Сергеев В., О юридических лицах публичного права // Банковское право. Изд-во Юристъ, Москва, 2013 г., N 2, էջ 3-15:

15. Тосунян Г., Викулин А., К вопросу о статусе Банка России. Деньги и кредит. 1998 г., № 9, էջ 9-16,

16. Терентьева Н., Правовая природа центрального банка Российской Федерации как юридического лица и субъекта права № 8 2016г. էջ 5:.

17. Чиркин В., Юридическое лицо публичного права. Монография, Изд-во Норма, Москва, 2007 г., 1247, 251.

18. Решение ЕСПЧ от 03.04.2001 «По вопросу приемлемости жалобы n 44319/98 «Ольга Валентиновна Романовская против Российской Федерации» էլեկտրոնային ռեսուրս <https://www.garant.ru/products/ipo/prime/doc/6034693/?ysclid=m8wrc14abw953390787>:

19. Helene Eller, Corporate governance in alpine clubs in Europe: Doctoral Thesis, Riga 2015, էջ 54, էլեկտրոնային ռեսուրս https://dspace.lu.lv/dspace/bitstream/handle/7/28200/298-46021-Helene_Eller_2015.pdf?sequence=1:

20. Barthold v. Federal Republic of Germany, 8734/79, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 25.03.1985 թվականի վճիռը, էլեկտրոնային ռեսուրս, [https://hudoc.echr.coe.int/eng#{"appno":\["8734/79"\],"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\],"itemid":\["001-57432"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{):

21. Revert and Legallaise v. France, 14331/88 և 14332/88, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 08/09/1989 թվականի վճիռը, էլեկտրոնային ռեսուրս, [https://hudoc.echr.coe.int/eng#{"appno":\["14331/88"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{):

Ամիրխանյան Ս. - ՀՀ գլխավոր հարկադիր կատարող, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, էլիասցե՝ s.amirkhanyan777@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 24.06.2025 թ., տրվել է գրախոսության 24.06.2025 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հայկյանցի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: